Գաղափարական առումով հրաշքների մասին պատմությունները ևս կոչված են փառաբանելու քրիստոնեությունն ու հավատի զորությունը: Ահա, օրինակ, վերը նշված պատմության ավարտաբանությունը, որն իրենից բարոյաբանական բնույթի եզրակացություն է ներկայացնում. «Եւ զայս ամենայն գործեաց սատանայ, զի խախտեսցէ զհաւատս քրիստոնէության. բայց սովաւ առաւել յաստատեցաւ ճշմարիտ հաւատս քրիստոնէութեան, և բարձրացաւ անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (էջ 424):

Ճիշտ է, միջնադարյան գրականության մեջ, ինչպես գրում է Արշակ Մադոյանը՝ «մատենագիրները մշակել են նաև բուն ուղեգրության տեսակը», այդուհանդերձ՝ «այդպիսի հիշատակություններ, նկարագրություններ, ճանապարհորդական տպավորություններ կարելի է գտնել գրական ամենատարբեր տեսակների մեջ՝ սկսած սրբախոսություններից, գեղարվեստական երկերից, վերջացրած պատմագրությամբ»[49]: Վերջին առումով առանձնանում է նաև Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը: Մասնավորապես՝ «Պատմութիւն վասն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի Աջին» վերնագրով Լ գլխում, որն իր բնույթով ժամանակակից ընկալմամբ ու տերմինաբանությամբ ասած՝ «լրագրողական հետաքննություն» է, Դավրիժեցին ներկայացնում է իր ճանապարհորդություններից մեկի մանրամասնությունները: Փիլիպպոս կաթողիկոսի հանձնարարությամբ՝ Սուրբ Էջմիածնի նվիրակության գործի համար նա մեկնում է «յաշխարհն Յունաց»: Այնտեղ Սեբաստացի Ներսես վարդապետի հետ զրուցելիս տարակարծություններ են առաջանում սուրբ Գրիգոր Լուսավորչի աջի գտնվելու ճիշտ վայրի հետ կապված, և Դավրիժեցին, ճշմարտությունը պարզելուն հետամուտ, փաստերը ճշտելու համար լինում է բազմաթիվ բնակավայրերում՝ Սպահան, Սեբաստիա, Վաստիկան, Ուռհա, Անկյուրա և այլուր, թերթում ու ընթերցում է բազում մատյաններ:

---

[49] ***Սիմեոն Լեհացի***, Ուղեգրություն, Երևան, 1997, տե՛ս «Երկու խոսքը», էջ 5: